

Հ. Ս. ՍՎԱԶՅԱՆ

Պատրիական զիտուրյունների դոկտոր

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ ՆՐԱ ՃԱՆԱՋՈՒՄԻՑ ՇԵՏՈ ԵՎ ԹԱԳԱՎՈՐ ԵՍՎԱԴԵՆՆ ՈՒ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԼ

4-րդ դարի 70-ական թթ. կեսերին քրիստոնեությունն Աղվանքում հոչակելով պետական պաշտոնական կրոն¹, թագավոր Ուտնայրը ձեռնամուխ է լինում այն երկրում արմատավորելու գործին:

Նոր կրոնը սկզբում ընդունվում է թագավորի շրջապատի և վերնախավի կողմից, սակայն ոժվարությամբ է ճանաչում գտնում հասարակության լայն շերտերում: Հեթանոսությունը դարերի ընթացքում խոր արմատներ էր տարածել ժողովրդի մեջ, և վերջինս հեշտությամբ չէր բաժանվում հին աստվածներից և սովորություններից: Անհրաժեշտ էր ամենաշտ պայքար հինը արմատախիլ անելու և մարդկանց դարձի բերելու համար: Երկրով մեկ ծավալվում է քարոզչական-լուսավորչական աշխատանք, որի օրինակն առաջինը տալիս է ինքը՝ Ուտնայր արքան: Հայաստանից Աղվանք վերադառնալով նա, Մովսես Կաղանակատվացու վկայությամբ, «ուսոյց և կատարեաց զնոսա (աղվանացիներին - Հ. Ս.) առաքելական կանոնօք»² և, դատելով նույն վկայության շարունակությունից, զգալի հաջողությունների է հասնում: «Ընկալան (աղվանացիները - Հ. Ս.), գրում է պատմիչը, - ամեներեան զդուշմն երկնաւոր և գրեցան ի դարութեան կենացն»³: Կառուցվում են եկեղեցիներ և, ինչպես Ազգաթանգեղոսն է ասում հայոց եկեղեցիների կապակցությամբ, «Ի ծառայութիւն սպասարութեան քահանայութեան»⁴ մարդիկ նշանակվում: Սահմանվում են նաև հասույթներ՝ «երախայրիք եկեղեցեաց»⁵:

Այս ամենի շնորհիվ հեթանոսությունն Աղվանքում տեղի է տալիս. «Հալածեցան ներ աշխարհիդ,- նշված է Աղվանից արքա Վաչե Բ-ին ուղղված Հայոց Գյուտ Կաթողիկոսի նամակում, որը մեզ է հասել Մ. Կաղանակատվացու միջոցով,- իսկամենցան զորք և ճնճեր, ամաշեաց մոլորդիւնն, բարձրացաւ ճշմարտութիւնն, թագաւորեաց լոյսն աներեւոյթ, մերժեցաւ կամակոր խաւարն, կարգեցան երախայրիք եկեղեցւոյ»⁶:

Աղվանքում ծավալված դապանաբանական պայքարում թագավորին աշակցում էին քրիստոնյա գործիչներ, որոնց առաջնորդներին հայ մատենագրության մեջ «հայրապետ»

¹ Հ. Ս. Սվագյան, Ավագագիրական հարաբերություններն Աղվանքում և քրիստոնեության հոչակումը որպես պետական պաշտոնական կրոն, Պատմա-բանահրական հանդես, 2003, թիվ 3, լ. 172-180:

² Մովսես Կաղանակատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983, լ. 20:

³ Նոյն գլուխում:

⁴ Ազգաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Երևան, 1983, լ. 466, § 837:

⁵ Կաղանակարգիքի, լ. 20:

⁶ Նոյն գլուխում:

տիտղոսով են մեծարություն: Նրանցից Ուռնայր արքայի մոտավոր ժամանակակիցները և նրա գործակիցները կարող են լինել Զաքարիա և Դավիթ Հայրապետները: Վերջիններս, Մանուկ Գրիգորիսի նահատակվելուց որոշ ժամանակ անց, Աղվանքում վերսկսում են իրենց գործունեությունը և թագավորի հովանավորությամբ հաջողությամբ իրականացնում այն, մանավաճառի, երբ քրիստոնեության պաշտոնական կրոն դառնալուց հետո դրա համար ստեղծվել էն նպաստավոր պայմաններ:

Դեռ է ազել, որ, ի տարբերություն հալածական ու աստանական նպատակների, այս շրջանում գործող հոգևոր առաջնորդները սեփական անձի ու գործունեության ապահովության համար ոչ միայն հարկադրված չէն լինում տեղից տեղ փոխադրվել, այլև հիմնում են իրենց կենտրոնատեղին: Տեր Զաքարիայից սկսած երկրի Հայրապետական Աթոռը հաստատվում է Չողում: Դա վկայում է Մխիթար Գոշը. «Եւ այսոքիկ են, որ ի Չող հայրապետը նստան,- գրում է նաև թվարկում հրան.- Զաքարիա, Դավիթ սուրբն, սուրբն Յոհան, Երեմիա»⁷: Այս վկայությունը ոչ միայն հաստատում է մեր ասածը, այլև ցուց տալիս, որ 4-րդ դարի վերջին քառորդում քրիստոնեությունն Աղվանքում լայն տարածում էր ստացել, որ հոգևոր կենտրոն ունենալու անհրաժեշտություն էր առաջացել:

Աղվանից աշխարհի հոգևոր կենտրոնի հիմնադրումը երկրի սահմաններից դուրս՝ Չողում⁸, պատահական չէր: Օսրունակվում էր անզիջում պայքարը հեթանոսության և քրիստոնեության միջև, և երկիրն ապրում էր խոռվախուզ ու տագնապալից կյանքով: Այսպիսի պայմաններում քրիստոնեական կենտրոնի հիմնադրումը պետության ցանկացած վայրում նշանակում էր մշտական սպառնալիքի տակ դնել հրա գոյությունը: Ուստի նոր կրոնի սպասավորները վերջինիս անվտանգությունն ու անդրորն ապահովելու նպատակով պետք է ընտրեին իրենց աշխարհի սահմաններից դուրս, ընդհանրապես քրիստոնեության համար անվտանգ մի վայր: Այսպիսին ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ըստ Երեւությին, Չողն էր, որ ընտրվեց աթոռանիստ վայր⁹: Քրիստոնեությունն այս շրջանում տեղական կրոնների համար իրենից վտանգ չէր ներկայացնում, նետարար և հանդուրժելի էր նրա կենտրոնի գոյությունն իրենց կողքին, և դա էլ ինենց ապահովում էր անվտանգությունը:

Որ իսկապես անվտանգությունն էր առաջին պայմանը, որ Աղվանից հայրապետաց առաջնորդարանը հաստատվեց Չողում, ցուց է տալիս այն, որ շուրջ 180 տարի (4-րդ դարի վերջին քառորդից մինչև 6-րդ դարի կեսերը, ավելի սույն՝ 552 թ.) այսեղ խաղաղ գո-

⁷ Նոյն վերում, լ. 350

⁸ Ըստունիքի չէ: որոշ ուսումնասիրողների այն կարծիքը, թե Չողը գտնվել է Աղվանից սահմաններում: Այդուրինիք և, առաջին հերթին, Տայոց «Աշխարհացոյցի» դվյաներով այն գտնվել է Սարմագիայում, որն Աղվանից բաւականի լուսաւորայի հարավային՝ Կերտույսան ճյուղով և Սոսնաս (այժմյան Սոմքայիթ) գետով, որոնցից Չող-Դարեններ կամ ճորավասիակը գգայիրըն հյուսի լ. թնկած (Տարցի հանգամանադից թվությունը գեն Ռ. Ս. Սվայցան, Աղվանքը սկզբանայից ուրիշ պատճեն է աղվանական գույքանության մեջ («Ամառուր պատճենահարիւագրական ակնարկը», Բանքեր Հայաստանի արխիվների, 1989, թիվ 2, լ. 153-157): Այս Աղվանից կազմում հայքնելի է Միայն 461 թ. մարգարական կազմավորումից հետո (Տնն Ռ. Ս. Սվայցան, Աղվանից մարգարական կազմավորման հարցի շուրջ, Պատմա-բանահրանական հանդես, 1979, թիվ 4, լ. 210-218):

⁹ Պատմության հայքին և նաև արքային առաջարկը, երբ բարձրական ու այլ կազմակերպությունների կենսորունական ներքունական հաստատվում կամ, նոյնիսկ, ծնավորվում էին երկրից դուրս:

յատևելուց հետո, մենց վտանգվեց գրա ապահովությունը «Քրիստոսի խաչի թշնամիների կողմից», ամփակեն փոխադրվեց Պարտավ: «Փոխեցին,- վկայում է Կաղանկատվացին-կողմից», ամփակեն փոխադրվեց Պարտավ: «Փոխեցին-վկայում է Կաղանկատվացին-կողմից» ամփակեն աղուանից ի Չորայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտավ վասն հիմահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի»¹⁰.

Այս շրջանում քրիստոնեությունն Աղվանքում այնպիսի ճանաչման է հասնում, իսկ երկրի Հայուապետերը էլ՝ համբավի, որ գրանցից Տեր Հռվիանը, որ հաջորդել էր Տեր Դավթին, դատում է Հռնաց երկրի եպիսկոպոս: «Սուրբ Թովհան, որ և Հռնաց եղև եպիսկոպոս», - տեղեկացնում է Կաղանկատվացին¹¹: Նույնը փաստում է և Կիրակոս Գանձակոպոս¹²: Ծիշու է, հաղորդելով այս մասին, պատմիչները մանրամասնությունների մեջ չեն խորանում, իսկ Կաղանկատվացին էլ դեռ շեշտում է, որ ինքը չգիտե, թե ո՞ս ինչպես է եղել¹³, բայց և այնպես կարելի է ենթադրել, որ այդ քայլով Աղվանքը ցանկացել է Հռնաց աշխարհում ևս (որ Չողում հաստատվելուց հետո Աղվանից Հայուապետերի համար դարձել էր գործունեության մերձակա շրջան) քրիստոնեության համար ճանապարհ հարթել և երկիրը ընդորկել իր ազդեցության ոլորտում:

Բայց, չնայած ձեռք բերած հաջորդություններին, քրիստոնեությունը, այնուամենայնիվ, թագավորության ողջ տարածքում չէ, որ տիրապետող էր դարձել: Այն ընդունելություն էր գտել կենտրոնական ու տնտեսապես զարգացած շրջաններում, խոշոր բնակչավայրերում, քրիստոնյա Հայաստանին սահմանակից մարզերում և համանման վայրերում: Իսկ հատկապես ծայր զավաներում ժողովուրդը դեռ պահպանում էր ներթանոսական հավատալիքները: Շատերն էլ նորադավաններից (այդ թվում և իշխաններ), հավանաբար Ունայրի մահից հետո, թողում են «Քրիստոսի ամենաինչշտ լուծը» և վերադառնում նախկին հավատից՝ «Վերըստին ի դիցախելար կորամոլութիւնս կործանեցան» և դեռ ավելին. այժմ իրենք են հալածանքներ սկսում քրիստոնյաների և նրանց գործիչների նկատմամբ, որոնք ատիպած են լինում գործել գգուշորեն, թաքնվելով աչքից հեռու ընկած վայրերում¹⁴: Այնպես որ քրիստոնեության պայքարը, բովանդակ երկրում տիրապետության համեմու համար, ընթանում էր նաև 5-րդ դարում, երբ Աղվանքի թագավորն էր Եսվաղենը, իսկ հոգևոր առաջդրդը՝ Տեր Դավթին հաջորդած Տեր Երեմիան:

Հզի հաղթահարման ճանապարհին մեծ նժկարություններ էին առաջացնում երկրի թագմացեղայնությունն ու գրանց լեզուների խայտարդեսությունը: Ժամասացությունը կատարվում էր մեծամասնության համար անհասկանալի հունարենով կամ ասորերենով: Այս խոչնոյտող վերացնելու, ավետարանական խոսքը ժողովրդին մոտ ու մատչելի դարձնելու և դրանով քրիստոնեության դիրքերը երկրում արագորեն ամրապնդելու համար Աղվանքում սկսվում է լուսավորչական մի շարժում, որը իր բնույթով այն համընդհանուր գործի շարունակությունն էր, որ մինչ այդ ծավալվել էր Մեսրոպ Մաշտոցի հանճարով լուսավորված Մեծ Հայրում ու Վիրքում: Ինչպես հարևան երկրներում, այնպես էլ այստեղ

¹⁰ Կաղանկատվացի, լ.9 119:

¹¹ Նոյն գլուխում, լ.9 342:

¹² Կ. Գանձակիցի, լ.9 195:

¹³ Կաղանկատվացի, լ.9 342:

¹⁴ Նոյն գլուխում, լ.9 95-96:

պետական հշամակության այս գործի զյուլս կանգնած էին թագավորը, արդեն նշված ես-վաղենն ու երկրի հոգևոր առաջնորդը՝ Երեմիան:

Եսկաղենը (Եսկաղէն, Արսաղ, Արսաղէն, Եսկաղան, Վաղան) ծագումով Արշակունի էր, Աղվանի Արշակունյաց արքայատոհմի շառավիղներից և, համաձայն մատենագրական աղբյուրների, պարսից արյաց արքաների ազգակիցներից¹⁵: Գահակալել է շուրջ 30 տարի՝ 414-444 թվ.¹⁶:

Հայ պատմագրության մեջ նա հիշատակվում է Աղվանից գրերի զյուտի և դրանում ու երկրում դպրության կազմակերպման և լուսավորության տարածման աշխատանքներում նրա գործուն մասնակցություն ունենալու կապակցությամբ և, ըստ որում, բոլոր այն պատմիչների կողմից, ովքեր խստում են խնդրո հարցի շուրջ: Ելնելով մատենագիտական այն հաղորդումից, թե Մեսրոպ Մաշտոցն աղվանից տառերը հորինելիս հիմք է ընդունել զարգարերներ, առաջ է քաշվել մի վարկած, որի համաձայն Եսկաղենը «թերևն» եղել է «զարգարմների Աերկայացուցիչը», որի միջնորդությամբ Մաշտոցը զիր ստեղծեց զարգարացոց խեցենկագույն լեզվի համար»¹⁷: Բայց դա թիւ հավանական է թվում: Գարզարերնեն, անշուշտ, ընկած է Աղվանից Ալբուրենի հիմքում, սակայն բավարար կովան չէ նման ենթադրությունների համար: Աղվանից որ ցեղախմբին էլ պատկանելիս լիներ Եսկաղենը, որպես երկրի թագավոր ու պետական գործիչ, առաջնորդվելու էր պետության և ոչ թե ներ ցեղային շահերով և իրականացնելու էր ժամանակի հրամայական պահանջը, որն էր՝ հանուն քրիստոնեության գրի ու լուսավորության տարածումը, որին էլ ձեռնամուխ եղավ թագավորը: Ընդհանրապես այս թագավորին վերաբերվող աղբյուրագիտական հաղորդումները նրան բնութագրում են որպես խելացի պետական գործիչ, ժամանակի առաջադեմ մտածող, գրի և գրականության ջատագով, որի ողջ գործունեությունը նպատակառության մեջ էր քրիստոնեության գերիշխանությունն ապահովելուն:

Եսկաղենի ժամանակակիցն ու գործակիցն էր Երեմիա Հայրապետը: Վերջինիս հիշատակումն էլ է կապված աղվանից գրերի զյուտի և դրանից մետք Աղվանքում տարվող լուսավորչական աշխատանքների հետ, որոնցում նա Աերկայացված է որպես Կննտրոնական դեմք:

«Սուրբ» օծությամբ կրոնական այս գործչին պատմիչներից Կորյունը մեծարում է «եպիսկոպոս»¹⁸, իսկ Մ. Խորենացին՝ «եպիսկոպոսապետ»¹⁹ տիտղոսով: Բայց Երեմիային

¹⁵ Սր. Օրբնյանի հաղորդմամբ, Աղվանից այս թագավորը պարսից արքա Շապոհ Ա-ի (242-270 թթ.) բռոջ թուու Լր (Տիւն «Պարմութիւն և անհանգին Սիսական, արարեան Սկիփանենու Օրբլեան արքեպիսկոպոսի Սիրննաց, Թիֆիս, 1910, լ. 56): Բայց, ամենայն հավանականությամբ, պարմիչը Շապոհ Ա-ին շփոթել է Շապոհ Ա-ի հետ, այսրանով, որքանով անհնարին Լր, որ 5-րդ դարում թագավորած Եսկաղենը լիներ 3-րդ դարում ապրած Շապոհ Ա-ի բրոջ թուու: Եթե այս հաղորդումը ճիշդ է, ապա նա կարող էր լինել միայն Շապոհ Բ-ի բրոջ թուու, իսկ այս դեպքում լի ևս նաև Ուռնայիր թուու կիրանը, որովհետ Կաղանակարպացին էլ առաջ է, թե վերջինս Շապոհ Բ-ի բրոջ ամուսինն էր (Տիւն «Կաղանակարպացի», լ. 14): Այսպիսից կարևի լ. և գրակացնել, որ Աղվանքում թագավորական իշխանությունը կրու լ. ժառանգական ընույթ:

¹⁶ Ն. Ակինյան, Մովսես Դաստիորանցի (Լուչվամ Կաղանակարպացի) և իր պարմութիւնն Աղուանից, Վենն-սփիլ, 1974 թ., լ. 166: Մ. Բարխուդարեանց, «Պարմութիւն Աղուանից, հագ. Ա., Վաղարշապար, 1902, լ. 75:

¹⁷ Բ. Ռուբուրյան, «Կայոց Աղվանից կողմանց և կենացքին և մշակույթը, Երևան, 2001, լ. 45:

¹⁸ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1949, լ. 70:

¹⁹ Սովուսի Խորենացոյ Պարմութիւն Հայոց, Երևան, 1991, լ. 329:

«եպիսկոպոսապետ» կոչելով, չենք կարծում, թե պատմահայրը նրա համար մի առանձին Ըվիրապետական ավելի բարձր աստիճան նկատի ունի: Ամենայն հավանականությամբ նա տուրք է տվել իր ժամանակի հասկացողությանը, և թերևս մտածելով, որ եթե Երեմիան երկրի Հայրապետն էր, ուստի և զբաղեցրած պաշտոնով ավագը մյուս նկատեցական գործիչների մեջ, նրան կոչել է եպիսկոպոսապետ: Սակայն ինչ Ըվիրապետական աստիճան էլ ունեցած լիներ, Երեմիան իր գործունեությամբ խոր հետք է թողել երկրում դպրության ու լուսավորության տարածման և քրիստոնեության ամրապնդման գործում:

Երեմիան էր, որ իր երկրի թագավորի հետ միասին լծակից դարձավ Մեսրոպ Մաշտոցին Աղվանքում նրա սքանչելագործ առաքելության ժամանակ:

Երկրի թագավորի ու Հայրապետի այսօրինակ գործունեության մասին, համեմատաբար մանրամասնությամբ, գրում է Կորյունը: Մեսրոպ Մաշտոցի ավագ աշակերտն իր աշխատության մեջ, որը գույք է 443-451 թթ. ընկած ժամանակամիջոցում²⁰, պատմում է, որ գրեթի զյուտից հետո, երբ Մեսրոպ Մաշտոցը գալիս է Աղվանք, «երկու զուգակիցները» («երկոցուց զուգակցելոց»)՝ թագավոր Եսվաղեն ու Երեմիա Եպիսկոպոսը, երկրի մյուս մեծամեծների հետ միասին, հանդիսավորությամբ դիմավորում են նրան և, ընդունելով դրանցներ բացելու և դպրություն տարածելու նրա առաջարկը, «վասն անուան Քրիստոսի» մեծ պատրաստակամությամբ ձեռնամուխ են լինում այդ գործին: Նրանց հրամանով Աղվանից աշխարհի տարբեր վայրերից ու զավաներից ուշիմ ու շանասեր մանուկներ են հավաքում, դպրոցներ բացում, աճշութ՝ հոգևոր, և նրանց դպրության արվեստին վարժեցնում²¹: Նույնը, որոշ հավելումներով, հաղորդում են նաև Ս. Խորենացին և, նրան հետևելով՝ Ս. Կաղանկաստվացին²²:

Կորյունը, իր վերոքարյալ պատմությունն անելիս, նշում է, որ դպրոցներու բացվում էին «ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց»²³, այսինքն ոչ թե ամենուրեք, որը պատահի, այլ հատկապես ընտրված վայրերում: Այս մանրամասնությունն ուշագրավ է նրանով, որ ցույց է տալիս դպրության կազմակերպիչների նպատակային մտացումը խնդրին: Նրանք պարզապես դպրոցներ չեն հիմնում, այլ հեթանոսության դեմ զաղափարական պայքարի կրթօջախներ և, առանձնապես, այն տեղերում, որտեղ դրանց անհրաժեշտությունն առավել էր զգացվում: Այդպիսիք, կարծում ենք, այն վայրերն էին, որ հեթանոսությունն իրենից զգալի ուժ էր ներկայացնում և խոչընդոտում քրիստոնեության արագ տարածմանը երկրում: Այդպիսի շրջաններում դպրոցներ բացելով, Եսվաղենը, Երեմիան ու նրանց օգնականները հեթանոսությունը տեղերում արմատախիլ անելու արդյունավետ միջոց էին գործի դնում:

Նորաբաց դպրոց-դասաւություն դպրական գործի հիմքում դրվում է քրիստոնեության հիմունքների ուսուցումը, սաներից կրոնական գործիչներ պատրաստելու և ժողովրդի մեջ ուղարկելու մտադրությամբ՝ Աստծո խոսքը հասկանալի լեզվով նրան հասցնելու և դավա-

²⁰ Վ. Նալբանդյան, Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործը (Տե՛ս Մեսրոպ Մաշտոց, հոդվածների ժողովածու), Երևան, 1963, լ. 20:

²¹ Կորյուն, լ. 70:

²² Խորենացի, լ. 329, Կաղանկաստվացի, լ. 117:

²³ Կորյուն, լ. 70:

նարանական պայքարում քրիստոնեության հաղթանակն ապահովելու համար: Եվ նոր հավատի վարդապետները, թագավորի հովանավորությամբ ու եպիսկոպոսի զիսավորությամբ, իրենց աշակերտների մեջ ձեռնամուխ են լինում Սուրբ Գրեգորի, ըստ պատմիչների, թարգմանությամբ: «Երամեկի Երեմիայի եպիսկոպոսի, - գրում է Կորյունը, - ի ձեռն առեալ վաղվաղակի զատուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկաներ»²⁴:

Կորյունի այս հաղորդումը թույլ է տվել ուսումնասիրողներին կարծելու, թե Երեմիան կատարել է Ս. Գրքի փոխադրում աղվաներնեն լեզվի: Սակայն, պատճեն կարծելով, Օրանք անտեսել են այն, որ «թարգմանություն» բառն ունի նաև «մեկնելով», «քացարելով» իմաստ²⁵, և սխալվել են: Մինչդեռ մի այլ խոսք ուսումնասիրողներ (Ն. Ակիմյան, Աս. Մնացականյան, Բ. Ուլուքարյան), ելնելով խնդրո առարկա բառի երկրորդ իմաստից ու հաշվի առնելով նժվարությունները, որոնց հաղթահարումը անհնարին էր այն կարճ ժամանակամիջոցում, որքան պահանջվում է այդպիսի մեծ գործի թարգմանության համար, իրավացիոննեն գտնում են, որ Երեմիան զբաղվել է սոսկ արդեն թարգմանված²⁶ Ս. Գրքի մեկնություններով, նոր բացարությամբ²⁷: Այսպես թե այնպես, Երեմիայի ու քրիստոնեության մյուս վարդապետների ջանքերը տվեցին իրենց դրական արդյունքը: Նույն Կորյունի վկայությամբ, կարճ ժամանակներում («յական թօթափել»²⁸) հեթանու աղվանացիները դարձան «մարգարէագետը, և առաքելածանօթը և աւետարանաժառանգը լինեին և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իիք անտեղեակ»²⁹: Ուշադրություն դարձնելով Կորյունի այս խոսքերի վրա, Հ. Աճառյանը գտնում է, որ Երեմիան ու մյուսները հայերնենց աղվաներենի են թարգմանել (իրականում մեկնաբանել ու ժողովրդի մեջ են տարածել) Ս. Գրքի ամենամեծ մասը՝ Մարգարելությունները, Ավետարանները և Գործք Առաքելոցը³⁰: Նույն հավանական ենթադրությունն ուժ է ստանում այն պարզ տրամաբանությամբ, որ հակառակ պարագայում Կորյունն Աղվանից աշխարհի մարդկանց «մարգարէագետը, առաքելածանօթը և աւետարանաժառանգը» չէր համարի:

Մանուկեր հավաքելու ու դպրոցներ բացելու հրամանը գլուխ բերելուց հետո, թագավոր Եսվագիրը Տայկագենան լսողուի, հ. Ա, Երևան, 1980, լ. 789, Շ. Աճառյան, Հայերն արմադական բառարան, հ. 2, Երևան, 1973, լ. 159:

²⁴ Ն. Ակիմյանի համոզված է, որ Երեմիան իր ծնորի դասական պատճենապես է պատվիրում հրաժարվել հին հավատալիքներից և ընդունել քրիստոնեական կրոնը³¹: Աղվանցում քրիստոնեությունը հովանավորվում էր պետության կողմից և այնքան էր տարածվել, որ նույնիսկ խաչը որպես խորհրդանշի սկսել էին պատկերել պետական դրոշի

²⁴ Նոյն գլուխ:

²⁵ Նոր բառզիրը Տայկագենան լսողուի, հ. Ա, Երևան, 1980, լ. 789, Շ. Աճառյան, Հայերն արմադական բառարան, հ. 2, Երևան, 1973, լ. 159:

²⁶ Ն. Ակիմյանի համոզված է, որ Երեմիան իր ծնորի դասական պատճենապես է պատվիրում հրաժարվել հին հավատալիքներից և ընդունել քրիստոնեական կրոնը³¹: Աղվանցում քրիստոնեությունը հովանավորվում էր պետության կողմից և այնքան էր տարածվել, որ նույնիսկ խաչը որպես խորհրդանշի սկսել էին պատկերել պետական դրոշի

²⁷ Նոյն գլուխում:

²⁸ Աճառյան, Մարգարէագետը, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Երևան, 1966, լ. 91 և հաջ.: Բ. Ուլուքարյան, Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, լ. 97 և հաջ.:

²⁹ Կորյուն, լ. 70:

³⁰ Նոյն գլուխում, լ. 70-71:

³¹ Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, լ. 220:

³² Տնը Կորյուն, լ. 70:

Վրա³²:

Այս ամրող ժամանակամիջոցում Աղվանքում էր գտնվում և նշված աշխատանքներն էր դեկավարում Մեսրոպ Մաշտոցը: Նրան օգնում էին հատուկ այդ նպատակով հրավիրված Սյումիքի եպիսկոպոս Անամիան և Բենիամին անունով թարգմանիչը, որ ուներ Երեցի աստիճան³³: «Ես, - գրում է Մ. Խորենացին, - կոչեալ զբենիամին ոմն շնորհալի թարգման, զոր անդամուար արձակեաց մանուկն Վասակա Սիրմեաց տէր ի ձեռն Անամիայի եպիսկոպոսի իրույ»³⁴: Նոյն ձևով է գրում և Մովսես Կաղամեկատվացին³⁵: Աղվանքում քրիստոնեության արմատավորման գործում Անամիայի և Բենիամինի ունեցած դերի մասին գրում է նաև Ստ. Օքրեյանը³⁶: Նրա վկայությամբ, այդ մեծ ծառայությունների համար քրիստոնեությանը ապահանձնանալի Եպալենն թագավորը, որպես Երախտագիտության ճշան, ճրան պարզաւատրում է մետաքսյա ոսկերից ճուրը հյուսվածքով, ոսկեգունդ կատարով ու խաչի պատկերով թագավորական դրոշով՝ պատվիրելով, որ Սյունիաց եպիսկոպոսներն այն մշտագիտ իրնեց Բետ կրեմ՝ ի Բիշատակ Աղվանքի թագավորների: «Իսկ, - վերոնիշյալ ասածին ավելացնում է Սյունիաց պատմիչը, - թագաւորն Եպալենն Աղուանից ... պատի արարեալ նմա, Երախտահատուց լինի, և պարզէ զիր նշանակն թագավորական ոսկէ տուտն վախի և ի զրուխն գումար ոսկէ և ի վերայ խաչ պատուական: Եր հրամայէ զայն համապաց շրջեցուցամէլ ընդ իրենան եպիսկոպոսացն Սիրմեաց ի յիշատակ թագաւորացն Աղուանից»³⁷:

Ստ. Օքրեյանի այս վկայությունը բնութագրում է Եսվաղենին որպես ջերմեռան քրիստոնյա գործիչ: Դա են մատնանշում ինչպես քրիստոնեության համար իր գործընկերներին Երախտապարտ լինելու, այնպես էլ թագավորական կամ, որ նոյն է պետական դրոշը քրիստոնեության խորհրդանշի հանդիսացող սուրբ խաչի պատուական:

Ավարտելով իր առաքելությունը Աղվանքում, Մեսրոպ Մաշտոցը վերադառնում է Մեծ Հայք: Նրա մասին գրու պատմիչներն ասում են, որ Հայաստան գալուց առաջ նա, Ակսած գործը շարումակելու համար; Աղվանքում վերակացու է թողնում իր աշակերտ Հովհանքանին և արքունի դռան ծառայության համար քահանաներ ճշանակում³⁸, ինչն արդեն նոր Երևոյթ էր քրիստոնյա Աղվանքի կյանքում և նշանակում էր, որ քրիստոնեությունն իր համար գործումնեության նորանոր ոլորտներ էր բացու:

Կարենի է ենթադրել, որ ինչպես Հովհանն, այնպես էլ նորանշանակ քահանաները վերջին շրջանում Աղվանքում բացված հոգևոր դպրոցների սաներից էին:

Եսվաղեն թագավորն աշքի է ընկել ոչ միայն Աղվանքում քրիստոնեության ամրապնդմանն ուղղված ջամքերով, այլև ուրիշ աստվածաբանությամբ: Երուսաղե-

³² Ստ. Օքրեյան, լ. 56:

³³ Կորյուն, լ. 68:

³⁴ Խորենացի, լ. 329:

³⁵ Կաղանեկարվացի, լ. 117:

³⁶ Ստ. Օքրեյան, լ. 56:

³⁷ Նոյն փեղում:

³⁸ Խորենացի, լ. 329; Կաղանեկարվացի, լ. 178:

* մում կառուցված Աղվանից վաճքերից³⁹ Պանդա կոչվող վաճքի ավերակների շրջակայրում 1868 թ. հոդային աշխատանքները կատարելիս հայտնաբերվել է մի տապանաքար, վրան՝ հայերեն երկաթագիր տառերով խճանկար արձանագրություն, հետևյալ բովանդակությամբ. «Բարեկամաւ ունելով առ Աստուած զՍուրբ Եսայի և գերանելի հարս Եսվանեա, արարի վասն թողովթեան մեղաց մերոց զիշատակարան զայ»⁴⁰:

Չնայած սուն արձանագրությունը թվագրվում է 6-7-րդ դդ., բայց և այնպէս այն ուսումնափրությունը չնեն կասկածել, որ այստեղ հիշատակված Եսվանեան ինքը՝ Աղվանից թագավորն է, որի օրոք Մեսրոպ Մաշտոցը գիր ստեղծեց նաև աղվանացիների համար⁴¹: Հօգուտ այս կարծիքի ավելացնենք, որ, ըստ Անաստաս Վարդապետի ցանկի մեկ այլ օրինակի, սուն Պանդա վաճքը կառուցվել է արքունի ծախսերով՝ «արքունի ծախսից»⁴², որ ինքնին թագավորական բարեհաճ վերաբերությունը ու շնորհ է ենթադրում:

Իսկ Աղվանից 5-6-րդ դարերի թագավորների շարքում միայն Եսվանեան էր բնութագրական նման քրիստոնեակեր գործի ձեռնարկումը:

Ուստի հնարավոր ենք համարում, որ Եսվանեան էր Պանդա վաճքի կառուցման հայաձեռնողը⁴³, հետևաբար և՛ Զրա շրջակայքում հայտնաբերված արձանագրության հեղինակը, Վերշիմիս որոշման ժամանակի որոշ տեղաշարժումով:

Այսպիսով, Եսվանեան թագավորը նիշտ կողմնորոշվելով ժամանակի բարդ իրադրության մեջ, կարողացավ մեծ դեր կատարել իր երկրում քրիստոնեության դիրքերն ամրապնդելու գործում: Նա մյուս առաջնորդի՝ Երևմիա եպիսկոպոսի հետ, հեթանոսության դեմ պայքարում գործի դժեռով նոր՝ գրի ու դպրության ստեղծման միջոցով երկրու լուսավորելու, քրիստոնեական ոգով՝ կրթված վարդապետներ պատրաստելու, ժողովրդի մեջ ուղարկելու և նրան մատչելի ձևով Սուրբ Գրքի գաղափարների մեկնարանմամբ քարոզչական աշխատանքներ տանելու արդյունավետ միջոց, հասավ զգալի հաջողությունների: Քրիստոնեությունն Աղվանքում պաշտոնական կրոն հոչվելուց հետո, զնալով ավելի ու ավելի էր լավ տարածում գտնում այն հասարակության մեջ և դառնում բնակչության մեծամասնության կրոնը:

³⁹ Քրիստոնյա աշխարհում ընդունված էր Երուսաղեմում վանքեր կառուցելը: Այսինք վանքեր ունեին և հայերը: Հայոց և Աղվանից այս վանքերի ցանկը 7-րդ դարում կազմել է Անաստաս վարդապետը: Նրանից էլ օգտվելով, Աղվանից թվով 10 վանքերի ցանկը ընդորինակն է իր գրում և գերեզման Մ. Կաղանկարվացին՝ «Անուան վանուրայից», որը յԵրուսաղեմ և Հիմնավայր անուն, զոր ի թոթոյ Նրաներուց Անաստասայ առ Վահան Մամիկոնեան առեալ ուսար, այս ևն» վերնագրով, և անուն առ անուն թվարկում դրանք (Տե՛ս Կաղանկարվացի, լ. 285-286):

⁴⁰ Ժամանակաբական պարմութին Մ. Երուսաղեմի, բաժնանալ յերկու հագործ, աշխափասիրութեամբ, հատքնաւ Ասքուածագործ Ապիսկոպոս Տ. Ցովիաննելնեանց, հագ. Ա, Երուսաղեմ, 1890, լ. 89:

⁴¹ Նոյն փեղում: Աս Մնացականեան, եղվ. աշխ., լ. 105:

⁴² Ա. Ց. Ցովիաննելնեանց, եղվ. աշխ., լ. 87:

⁴³ Խնձոր ատարկա վաճքի կառուցում իրականացրել է Պանոն անունով մի ճգնավոր: Այդպիս է Կաղանկարվացու մոտ. «Պանդա վաճքը ... , գրում և. նա.- Պանոն ուն ճգնաւոր յԱղուանից նոյնականացնող» (Կաղանկարվացի, լ. 285):